Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-ամյա հոբելյանի գլխավոր տոնական հանդիսության ծառայությունների ձեռք բերման պետական գնման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍԴ-ԾՁԲ-04/07/25/1

ք. Երևան 04 հուլիս 2025թ.

Սահմանադրական դատարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Սամվել Առաքելյանի, որը գործում է Սահմանադրական դատարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և «Գայա03» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Հայկ Աղաբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-ամյա հոբելյանի գլխավոր տոնական հանդիսության** ծառայությունների ձեռքբերման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

Digitally signed by AGHABEKYAN

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է **30 830 000 (երեսուն միլիոն ութհարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 27-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Digitally signed by AGHABEKYAN HAYK 3505900192

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականնարտակարգդրությունն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսիցավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապանի կողմից գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման ընթացքի վրա:

Digitally signed by AGHABEKYAN

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սահմանադրական դատարան	«Գայա03» ՍՊԸ
	ք. Երևան, Միրաքյան 46/1
Հասցե՝ Բաղրամյան 10	ՀՀ 22029012687300
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառն. վարչ	ՀՎՀՀ 01306351
Հ/Հ՝ 900011179083	Տնօրեն Հ.Աղաբեկյան
ՀՎՀՀ՝ 00018357	Digitally signed by AGHABEKYAN
Ս. Առաքելյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
04 հուլիս 2025թ. կնքված
ՍԴ-ԾՁԲ-04/07/25/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը
1	79111200	**Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-ամյա հոբելյանի գլխավոր տոնական հանդիսության /համերգային ծրագրի/ կազմակերպում** Տոնական հանդիսությունը կայանալու է օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, որն իր մեջ ընդգրկում է. Սցենար - հաղորդավարական, Սցենար տեսաշարերի, Երկու հաղորդավարեր, Բեմադրման ռեժիսուրա, Համերգային ծրագիրն ուղեկցող թեմատիկ տեսաշարերի պատրաստում՝ 4 հատ, ֆիլմ-էսսե՝ չորս թեմատիկ հատվածներով /ըստ որոշ միջնադարյան և քրոնիկ թեմաների/:Ընդհանուր տևողությունը 20 րոպե:16*9 ֆորմատ, ful HD: Ֆիլմի պատրաստման մեջ ներառված՝ցենար, մանասնակի նկարահանումներ, մոնտաժում, ետկադրային ձայն, երաժշտական ձևավորում, գունաբաժանում: Միջոցառումը բաղկացած երկու մասից: Արարողակարգային և համերգային: Արարողակարգայինում փողային նվագախմբի և պատվոպահակախմբի մասնակցություն: Պաշտոնատար անձանց ելույթների ուղեկից տասաֆոներ ու համապատասխան ձայնային սարքավորումներ, ամբիոնի առկայություն: ՀՀ հիմնի կենդանի երգչախմբային կատարում: Գեղարվեստական, համերգային համարներին ֆոն 2դե տեսանյութերի և էֆֆեկտների պատրաստում /9 հատ 3-ից 5 րոպե տևողությամբ/, Եռաչափ անիմացիոն գլխագրերի պատրաստում /3 հատ, 30 վ. տևողությամբ/: **Մասնակցություն համերգին** - ՀՀ վաստակավոր արտիստներ, /2 երգիչ/ - Երգիչ կատարողներ /4 հոգի/ - «Բարեկամություն» պարի համույթ – 26 պարող, - Սինֆոնիկ նվագախումբ -70 երաժիշտ - Կամերային Դասական երգչախումբ /80 անձ/,	դրամ	**30 830 000**	1	ք. Երևան, Թումանյան 54, «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եվ բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	05.հուլիս 2025թ

Digitally signed by AGHABEKYAN HAYK 3505900192

- Վոկալիստների սեպտետ /6 անձ/,
- Ջազմոդեռն պարախումբ – 28 անձ
- Պարի պետական անսամբ – 34 պարող

Խորեոգրաֆիկ ու երգչախմբային կոմպոզիցիոն բազմամարդ համարներ պատրաստու և ցուցադրումի նվիրված թեմատիկ խորհրդին, պետական խորհրդանշաններին և Սահմանադրության 30 ամյակին՝ խորեոգրաֆիկ լուծումներով ու մոնումենտալ էֆֆեկտներով /4րոպե տևողությամբ/:
Տեսարանների համար՝ անհրաժեշտ հագուստներ ու համապատասխան թեմատիկ բեմական ռեկվիզիտներ:
Համերգային մասի տևողությունը՝ շուրջ 1ժամ 20 րոպե:
Տեխնիկա
Սպասարկումն իր մեջ ընդգրկում է՝
ԼԵԴ էկրաններ նախատեսված տեսանյութերի ինչպես նաև հատուկ պատրաստված տեսախացիկների հեռարձակման համար: ԼԵԴ էկրանների լուսադիոդների հեռավորությունը պետք է լինի 3-5մմ հեռավորությամբ և պետք է հագեցած լինի 16 bit թվային ազդանշանի թարմացման համակարգով, Gloshine 4մմ կետայնությամբ : ԼԵԴ էկրանները պետք է բաղկացած լինեն մոդուլներից, որոնք հավաքվելով պետք է դառնան մեկ ամբողջական էկրան: Մոդուլների չափսերը պետք է լինեն 1մետր բարձրությամբ 0.5 մետր լայնքով, այսինքն 0,5 քմ մակերեսով:
ԼԵԴ էկրանները պետք է ունենան կառավարման 1 համակարգ և կառավարման ծրագիր, որը պետք է լինի սպասարկման բաղադրիչը: Կառավարման համակարգը և արտաքին սարքերը պետք է նախորոք ծրագրավորել այնպես, որ տվյալ նյութերի հեռարձակումը հաջող ստացվի և պատկերների շեղումներ չլինեն: Կառավարման բլոկը պետք է բաղկացած լինի հասցեավորման բլոկից, թողարկիչ սարքից և կառավարման ծրագրից:
ԼԵԴ էկրանների սպասարկման համապատասխան մասնագետի առկայություն:
Միջոցառումը պետք է հագեցած լինի շարժական և անշարժ լուսային համակարգով, որը նախապես պետք է պլանավորված լինի լուսային ձևավորման մասնագետի և գեղարվեստական մասի պատասխանատուի պատկերացմամբ: Պետք է նախատեսել շարժվող լուսատու սարքեր /Լեդ լուսատու սարք Light sky pearl wash 12X40watt 34 հատ, ընդհանուր գունային ֆոներ ունենալու համար, ինչպես նաև ուղորդված լուսարձակներ՝/Լուսատու սարք FineArt Fine 2000L BSWF 16 հատ/ ընդհանուր բեմական տեսքի լրացումները ամբողջացնելու համար: Ինչպես նաև ալյումինե կոնստրուկցիա LED էկրանների կիսկոր կախելու համար 10*6մետր: Պետք է նախատեսել լույսերի թվային կառավարման վահանակ, ըստ համապատասխան լույսերի քանակի և հասցեների կառավարման համար:
Լուսային ձևավորման համապատասխան մասնագետի առկայություն:
Մասնագետների թեկնածությունը պետք է քննարկել պատվիրատուի կամ գեղարվեստական մասի ղեկավարի հետ:

Digitally signed by
AGHABEKYAN HAYK
3505900192
Date: 2025.07.04

		Պետք է նախատեսել նաև ինչեղային սարքավորումներ նվագախմբի, երգչախմբի, մենակատար երգիչ կատարողների, հաղորդավարների և արարողակարգային ելույթների համար / Բարձրախոս նախատեսված բարձր հաճախականությունների համար, Adamson S10. - 10 հատ, բեմում վոկալի և երաժիշտների համար Adamson M212 - 8 հատ, հարվածային գործիքների համար - 8 հատ, փողային և փայտափողային գործիքների համար DPA 14 հատ, ձայնի կառավարման համակարգ Alen&Heat DliveS5000 – 2 հատ, ինչեղակին ուժեղացուցիչ գինամիկներ և մոնիտորներ - 4 հատ/ ապահովելու համար համերգի ինչեղությունն ու լսելիությունը դահլիճում և հեռուստանկարահանման համար: Մետաղական շղթայով էլեկտրական ամբարձիչներ բեմական կոնստրուցիաներն ու տեխնիկան կախելու համար - 18 հատ: :					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սահմանադրական դատարան
Հասցե՝ Բաղրամյան 10
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառն. վարչ
Հ/Հ՝ 900011179083 .
ՀՎՀՀ՝ 00018357
Ս. Առաքելյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գայա03» ՍՊԸ
ք. Երևան, Միրաքյան 46/1
ՀՀ 22029012687300
ՀՎՀՀ 01306351
Տնօրեն Հ.Աղաբեկյան

Digitally signed by
AGHABEKYAN HAYK
3505900192

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2

04հուլիս 2025թ. կնքված
ՍԴ-ԾՁԲ-04/07/25/1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79111200	Ներկայացուցչական ծառայություններ	0	0	0	0	0	0	30 830 000	30 830 000	30 830 000	30 830 000	30 830 000	30 830 000	30 830 000

ՀՀ դրամ

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սահմանադրական դատարան
Հասցե՝ Բաղրամյան 10
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառն. վարչ
Հ/Հ՝ 900011179083
ՀՎՀՀ՝ 00018357
Ս. Առաքելյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գայա03» ՍՊԸ
ք. Երևան, Միրաքյան 46/1
ՀՀ 22029012687300
ՀՎՀՀ 01306351
Տնօրեն Հ.Աղաբեկյան

Digitally signed by AGHABEKYAN
(ստորագրություն)
Կ.Տ.